Նոր Ազնաբերդ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Եղիշ Հովհաննիսյան

Հեռ. +374 77700612

Նոր Ազնաբերդ (նախկին անվանումները՝ Գյուլստան), գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, մարզկենտրոնից 42 կմ հարավ-արևելք, Ճահուկ գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակի ափին, Վայոց ձորի լեռների հարավային բարձրադիր լանջին։ Ծովի մակերևույթից բարձր է 1630 մ։

Գյուղի միջով անցնում է Ճահուկ և Լվիս կոչվող գետակները։ Սահմանակից է Նախիջևանի Բզկով գյուղին, որի հետ ունի մոտ 5 կմ սահման, սահմանակից է նաև մարզի Խնձորուտ և Սերս գյուղերին։ Ճահուկ գետի վրա են գտնվում Վերին Շենիկ գյուղի ավերակները։

Նոր Ազնաբերդը կառուցվել է 1949 թվականին, բնակեցված է եղել ադրբեջանցիներով։ 1988թ. հայ-ադրբեջանական դեպքերից հետո այն վերաբնակեցվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ազնաբերդ գյուղից Հայաստան փախած հայերով։

Գյուղը կրթական հաստատություն չունի, երեխաները հաճախում են հարևան Խնձորուտ գյուղի դպրոց։ Գյուղում գործում է բուժկետ։